ԾԱՆՈՒՑՈՒՄ
2024 թվականի հունիսի 27-ին, ժամը 14:00-ին գումարվող «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»
բաց բաժնետիրական ընկերության
բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի մասին

Ընկերություն- «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» բաց բաժնետիրական ընկերություն
Գտնվելու վայրի հասցե- ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության խորհրդի 2024 թվականի մայիսի 27-ի նիստում ընդունվել է թիվ 27/05/2024 որոշումը, որի համաձայն որոշվել է 2024 թվականի հունիսի 27-ին, ժամը 14:00-ին գումարել Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով (**այսուհետ՝ նաև Ժողով**)՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ:

Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվելու է 2024 թվականի մայիսի 27-ի դրությամբ:

Ընկերության բաժնետերերի 2024 թվականի հունիսի 27-ին, ժամը 14:00-ին գումարվող տարեկան ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված են հետևյալ հարցերը.

- ✓ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ և «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ ընկերությանը 100 տոկոս սեփականության իրավուքով պատկանող «ԱՍԿԵ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվության և հաշվեկշռի հաստատում, շահույթի և վնասների հաստատում, աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:
- ✓ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ Տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատում և անդամների ընտրություն:
- ✓ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ 2024թ տարեկան ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտի ընտրություն և հաստատում:
- ✓ «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ ֆինանսական միջոցների ներգրավման հարցի քննարկում:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին կարելի է ծանոթանալ և ձեռք բերել երկուշաբթիից-ուրբաթ օրերին՝ 2024 թվականի մայիսի 28-ից մինչև հունիսի 26-ը ներառյալ՝ Ընկերության կադրերի բաժնում (ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2 հասցեում) ժամը 10:00-ից մինչև 15:00:

Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու համար բաժնետերը (*անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով*) կամ նրա կողմից լիազորված անձը (*լիազորությունները հաստատված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան*) պետք է 2024 թվականի հունիսի 27-ին ժամը 12:00-ից մինչև 13:45-ը գրանցվի ժողովի մասնակիցների գրանցամատյանում: Գրանցումից անմիջապես հետո կտրամադրվեն ժողովի օրակարգում ներառված հարցերի քվեաթերթիկները:

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ խորհուրդ